

Հարգանքի տուրք մատուցվեց երկրաշարժի զոհերի հիշատակին

Մարզկենտրոնն Կապանում դեկտեմբերի 7-ին հարգանքի տուրք են մատուցել 1988 թ. աղետալի երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին: ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, Կապանի քաղաքապետի տեղակալ Ռուդոլֆ Սարգսյանը, Կապանի քաղաքապետարանի և Սյունիքի մարզպետարանի աշխատակազմերի, նրանց ենթակայությամբ գործող առողջապահական և կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ դպրոցականներ ու քաղաքացիներ Բաղաբուրջի հուշահամալիրում ծաղկեպսակներ ու ծաղիկներ դրեցին երկրաշարժի զոհերի հիշատակին: